# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

N 28

« 16 » օգոստոսի 2017թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն ԱՇՈՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեզ է ներկայացվում Դաշտադեմ համայնքի ավագանու 15-ը օգոստոսի 2017 թվականի թիվ 7, 8, 9 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2017 թվականի N 7

## ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 02-ը հունիսի 2016 թվականի թիվ 631-Ն որոշման պահանջներով Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Դաշտադեմ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը հետևյալ կազմով

**Գոհար Սարգսյան** – Դաշտադեմի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ հանձնաժողովի նախագահ

**Միեր Մարտիրոսյան** – Դաշտադեմի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ հանձնաժողովի քարտուղար

**Արկադի Մարտիրոսյան** – Դաշտադեմի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ հանձնաժողովի անդամ

**Արամ Գևորգյան** – Դաշտադեմ համայնքի ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ

**Անի Հարությունյան** – Վորլդ Վիժն գրասենյակի սոցիալական աշխատող՝ հանձնաժողովի անդամ

2.Ուժը կորցրած ճանաչել Դաշտադեմ համայնքի ավագանու 28-ը փետրվարի 2017 թվականի թիվ 4 որոշումը:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Գևորգյան Արամ

Հովսեփյան Վահե

Մարտիրոսյան Տարոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. օգոստոսի 15

գ. Դաշտադեմ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 օգոստոսի 2017 թվականի N 8

## ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 -րդ հոդվածի 21-րդ կետով և ՀՀ «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 1-ին կետով, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Տալ համաձայնություն աճուրդ-վաճառքի ներկայացնելու Դաշտադեմ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի՝ 0.2187 հա հողակտորը /ծածկագիր 02-035-0006-0021/, 0.214 հա հողակտորը /ծածկագիր 02-035-0006-0022/, 0.1772 հա հողակտորը /ծածկագիր 02-035-0002-0008 / և արոտավայրի 4.0 հա հողակտորը /ծածկագիր 02-035-0136-0003/ :
2. Հողերի օտարման աճուրդում մեկնարկային գները սահմանել կադաստրային արժեքի 50 տոկոսի չափով:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Գևորգյան Արամ *(ստորագրություն)*

Հովսեփյան Վահե *(ստորագրություն)*

Մարտիրոսյան Տարոն *(ստորագրություն)*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *(ստորագրություն, կնիք)* Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. օգոստոսի 15

գ. Դաշտադեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2017 թվականի N 9

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-035-0031-0028 կադաստրային ծածկագիրը կրող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասից 0.01 հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և այն Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կապի գործառնական նշանակության հողերի շարքը փոխադրելուն՝ <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ-ի կողմից տեղադրված կապի կայանի զբաղեցրած հողամասի նպատակային նշանակությանը համապատասխան պետական գրանցում ստանալու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Գևորգյան Արամ

Հովսեփյան Վահե

Մարտիրոսյան Տարոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. օգոստոսի 15

գ. Դաշտադեմ